

հեռու է, և Յերոնիմոս կ'իմացնէ թէ Ղազարոսի գերեզմանին վրայ շինուած է եկեղեցի մը: Դ. դարուն էթէրիա ուխտաւորուհին կը պատմէ թէ մեծ պահոց վերջին շաբաթի եօթներորդ ուրբաթին քրիստոնեաները Ձիթենեաց լեռնէն անցնելով նախ կը կենային «Ճակարհի եկեղեցին», այնտեղ՝ ուր Յիսուսի, Մարթայի եւ Մարիամու միջեւ խօսակցարժան տեղի ունեցաւ եւ կը հասնէին 500 քայլ աւելի հեռու Ղազարիոն, Ղազարու պարագ գերեզմանը. անկէ ի վեր այս անունը պահուած է և արարները կը կոչեն զայն էլ՝ Ազարիէհ: Մինչև 1102 թուականը ուղեգիր ուխտաւորներ այցելած են և միշտ Ղազարու գերեզմանը գտած են եկեղեցիին մէջ՝ որուն կը սպասարկէին մերձակայ վանքին կրօնաւորները: Ուղեգիրներու պատմութեան մէջ կը յիշատակուի թէ 1134ին Մելիսանդ թագուհին հոն շինած է հոյակապ եկեղեցի մը և կուսանոց մը՝ ուր իր քոյրը Յուզիթ ունեցած է ճգնողական կեանք մը: Սալաէտիւնի գրաւումէն յետոյ տեղւոյն սրբավայրերն ու շէնքերը աւերակի վերածուեցան: Յովհաննէս եպս. Երուսաղէմացի կը գրէ Ղազարու գերեզմանի մասին. «Եւ աստ գոյր այր մի դժուարաէջ աստիճանօք. և անդ է գերեզմանն Ղազարու բարեկամին Գրիստոսի . . . : Աստ ասի գոն գերեզմանք Մարթայի և Մարիամու քերցն Ղազարու: Սա յառաջագոյն մեծ վանք էր և փառաւոր եկեղեցի էր, զոր այլազգիքն քակեալ և իւրացուցեալ են» (Հան. էջ 277):

Բեթանիոյ մէջ կը յիշուի նաեւ Կիւրղի եպիսկոպոսի եւ իր մօրը Աննայի նահատակութեան աւանդութիւնը հետեւեալ կերպով. Յուլիանոս ուրացող կայսրը (361 - 363) երբ Երուսաղէմ եկաւ՝ հրեաները